ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

Հայոց լեզվի և գրականության ամբիոն

Ամբիոնի վարիչ՝ Բաբուռյան Հ. Ռ.

Արձանագրություն № __8__

«__23__» _____մայիս____2023__թ.

ՀԼԳ/բ-051 «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ / Շարահյուսություն 1/»

ԴԱՍԸՆԹԱՑԻ

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝ 011301.00. 6 Ընդհանուր մանկավարժություն

Կրթական ծրագիր՝ 011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա

Որակավորման աստիճան՝ Մանկավարժության բակալավր

Ամբիոն՝ Հայոց լեզվի և գրականության

Ուսուցման ձևը՝ հեռակա

Կուրս/կիսամյակ՝ 3-րդ /2-րդ

Դասախոս՝ Հասմիկ Հարությունյան

էլ. հասցե՝ harutyunyanhasmikp@yandex.ru

Վանաձոր- 2024թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում

Դասընթացի նպատակը և խնդիրները

Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները

Դասընթացի կրթական վերջնարդյունքները

Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում՝ ըստ աշխատաշուկայի պահանջների

Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

Ուսումնական աշխատանքների տեսակները

Դասավանդման մեթոդները

Ուսումնառության մեթոդները

Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը

Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում

Ուսանողների գիտելիքների ստուգում

Հարցաշար

Դասընթացի համառոտ նկարագրիչ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. **Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում.**

«Հայոց լեզու (շարահյուսություն-1)» առարկայի դասընթացի ուսումնական փաթեթը կազմված է բակալավրի հիմնական կրթական ծրագրով ***«Ընդհանուր մանկավարժություն»*** մասնագիտության ***011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա*** կրթական ծրագրի չափորոշիչների հենքով կազմված ուսումնական պլանի պահանջների, առարկայի բաղադրիչների հիման վրա և նպատակաուղղված է բակալավրական կրթության կազմակերպման, դասավանդման որակի բարձրացմանը:

Դասընթացի ընթացքում ուսանողը գիտելիքներ է ձեռք բերում պարզ նախադասության շարահյուսության առարկայի և խնդիրների, ինչպես նաև պարզ նախադասության կառուցվածքային տիպաբանության վերաբերյալ:

Դասընթացը ներառված է ***011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա*** կրթական ծրագրի ուսումնական պլանում:

2. Դասընթացի նպատակը և խնդիրները.

Դասընթացի նպատակն է.

- բացատրել ուսանողներին «պարզ նախադասության շարահյուսություն» հասկացության գիտակարգային սահմանները, գիտակարգի ժամանակակից ընկալումները, ուսումնասիրության առարկան, տեսական և գործնական նշանակությունը:
- փոխանցել ուսանողներին պարզ նախադասության միավորների և անդամների իմաստային և քերականական հարաբերության տեսակների վերաբերյալ գիտելիքներ:
- զինել ապագա ուսուցչին մասնագիտական հիմնարար գիտելիքների, ինչպես նաև գիտնական-հետազոտողին և՛ տեսական, և՛ գործնական-կիրառական կարողություններով ու հմտություններով:

Դասընթացի խնդիրներն են՝

- Բացատրել պարզ նախադասության անդամների շարահյուսական հարաբերությունների դրսևորման եղանակներն ու միջոցները, կառուցվածքային հատկանիշները, դրանց դասակարգման սկզբունքները:
- Ամրապնդել ուսանողների կողմից ձեռք բերված տեսական գիտելիքները գործնական իրավիճակային խնդիրներով:
- Սովորեցնել ուսանողներին ճիշտ կազմել խոսք, ազատ շարադրել մտքերը, տեքստ կառուցելու հմտություններն ու նրբությունները, կետադրությունը:

3. **Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները**

Տվյալ դասընթացին մասնակցելու նախապայմանն այն է, որ ուսանողը ժամանակակից հայոց լեզվի դասընթացի կառուցվածքային նախորդ բոլոր մակարդակների վերաբերյալ բավարար գիտելիքներ ունենա:

4. **Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը և կոմպետենցիաները.**

«Ժամամանակակից հայոց լեզու /շարահյուսություն/ -1» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողից ակնկալվող վերջնարդյունքներն են.

Իմանա՝

Բառակապակցության և պարզ նախադասության բաղադրիչների շարահյուսական հարաբերությունների դրսևորման եղանակներն ու միջոցները, դրանց կառուցվածքային հատկանիշները, դասակարգման սկզբունքները:

Կարողանա՝

Տարբերակել բառակապակցությունների և պարզ նախադասութրունների կառուցվածքային տիպերը, տեսակները, գերադաս և ստորադաս բաղադրիչների բնույթը:

Տիրապետի՝

Բառակապակցությունների և նախադասությունների դասակարգմանը, պարզ նախադասության անդամների կապակցման միջոցներին, կաղապաչային ձևերով և գծագրերով բառակապակցություններ նախադասություններ կառուցելու հմտությանը, շարահյուսական վերլուծության հմտություններին:

Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.

Ընդհանրական կոմպետենցիաներ՝
Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝
ԳԿ3 հենքային և ընդհանուր գիտելիքներ,
ԳԿ4 մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,
Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝
ՀԳԿ1 գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,
ՀԳԿ8 ինքնուրույն աշխատելու ունակություն,

Բ)Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)
ԱԿ3 համապատասխան համատեքստում ընկալել և մեկնաբանել նոր տեղեկատվությունը,
ԱԿ4 ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն:

5. **Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում՝ ըստ աշխատաշուկայի**

պահանջների.

«Ժամամանակակից հայոց լեզու /շարահյուսություն/-1» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն ու հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել դպրոցում՝ մանկավարժական գործունեության ընթացքում, հաղորդակցական տարբեր ոլորտներում, ինչպես նաև մագիստրատուրայում ու ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

Չափանիշ	Առկա ուսուցման համակարգ	Հեռակա ուսուցման համակարգ
Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ)	**4 կրեդիտ// 120 ժամ**	**4 կրեդիտ// 120 ժամ**

Աշխատանքի տեսակը	ժամաքանակ	ժամաքանակ
Դասախոսություն	24	6
Գործնական	30	8
Ինքնուրույն	66	106
Ընդամենը	120	120
Ստուգման ձևը՝	Ընթացիկ գրավոր քննություն	Հանրագումարային քննություն

7. Ուսումնական աշխատանքների տեսակները .

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց տրամաբանական և ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեսզի որոշակի մանակցություն ցուցաբերի ուսումնական գործընթացին:

8. Դասավանդման մեթոդներներն են `[1] հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, իրավիճակային խնդիրների վերլուծություն:

9. **Ուսումնառության մեթոդներն են՝** թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, համեմատման և համակարգման սխեմաների կազմում, ուսումնասիրության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների.

h/h	Թեմա (բաժին)	Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների				
		դասախոսություն	սեմինար պարապմունք	գործնական աշխատանք	լաբորատորա աշխատանք	ինքնուրույն աշխատանք
1.	Շարահյուսությունը որպես քերականության բաժին, շարահյուսության կաղապարները: Լեզու և խոսք: Շարահյուսական կապակցության միջոցներն ու եղանակները:	1		2		20
2.	Բառակապակցություններ: Նախադասություն, հիմնական հատկանիշները: Տեսակներն ըստ հնչերանգի: Նախադասության կառուցվածքային տեսակները:	1		2		20
3.	Ենթակա, տեսակները, արտահայտությունը: Ստորոգյալ, քերականական ձևավորումը, տեսակները, արտահայտությունը:	1		2		22
4.	Գոյականական անդամի լրացումներ: Բայական անդամի խնդիր լրացումներ: Բայական անդամի պարագա լրացումներ:	2		1		24
5.	Դերբայական դարձված և նախադասության կողմնակի անդամներ: Տրոհվող լրացումներ: Նախադասության հարակից միավորներ:	1		1		20
6.	ԸՆԴԱՄԵՆԸ	6		8		106

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

հ/հ	Անվանումը/հեղինակ	Հրատարակության տարի
Պարտադիր գրականություն (ՊԳ)		
1.	Ս. Աբրահամյան, Հայոց լեզու. շարահյուսություն	2004
2.	Ս. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, Հայոց լեզու	1975
3	Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան և այլք, Ժամանակակից հայոց լեզու	1976
4	Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն	2003
Լրացուցիչ գրականություն(ԼԳ)		
6	Ա. Պապոյան, Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ	2004
Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ)		
	http://www.armin.am/images/menus/2592/Leonid_Telyan.pdf	
	http://lraber.asj-oa.am/6316/1/200-205.pdf	

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ
Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

հ/հ	*Թեմա*	Ուսումնասիրվող հարցեր	*Ժամաքանակ*	Գրականություն[2]
1.	Շարահյուսությունը որպես քերականության բաժին, շարահյուսության կաղապարները: Լեզու և խոսք: Շարահյուսական կապակցության միջոցներն ու եղանակները:	Շարահյուսության նվազագույն և առավելագույն միավորներ: 2.Լեզվական մակարդակներ: 3.Շարահյուսական կապակցություն: 4.Շարահյուսական կապակցության միջոցները: 1.Առդրություն: 2Համաձայնություն: 3.Կառավարում (ուժեղ, թույլ, անմիջական,միջնորդ., միակի, բազմակի): 4.Հարակցում: 5.Արժույթ:	1	ՊԳ 1, 2, 5

[2] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

2	Բառակապակցություններ: Նախադասություն, հիմնական հատկանիշները: Տեսակներն ըստ հնչերանգի:	1.Բառակապակ ցության սահմանում; 2.Բառակապակ ցությունների դասակարգում: 3.Վերաիմաստավոր ված կայուն բառակապակցու թյուններ: Նախադասության տեսակների և գլխավոր և երկրորդական անդամների նկարագիրը:Դիմավոր միակազմ և անդեմ միակազմ նախադասությունների ենթատեսակների բացահայտում և ճանաչում:	1	ՊԳ 1, 2, 3, ԼԳ 1
3	Նախադասության կառուցվածքային տեսակները: Ենթակա, տեսակները, արտահայտությունը: Ստորոգյալ, քերականական ձևավորումը, տեսակները, արտահայտությունը:	Միակազմ և երկկազմ նախադասություններ: Ենթակայի և ստորոգյալի արտահայտության և կազմության լուսաբանում: Նախադասության երկրորդական անդամների դասակարգման սկզբունքների բացահայտում:	1	ՊԳ 2, 3, ԼԳ 1
4	Գոյականական անդամի լրացումներ: Բայական անդամի խնդիր լրացումներ: Բայական անդամի պարագա լրացումներ:	Գոյականական անդամի լրացումների ճանաչում: Խնդիրների տեսակների ճանաչու մ,դրանց արտահայտությունների վերհանում: Պարագաների տեսակնեի և նրանց արբահայտությունների լուսաբանում:	2	Դասախոսական տեքստ ՊԳ 1,2, 3, ԼԳ 1

5	Դերբայական դարձված և նախադասության կողմնակի անդամներ: Բազմակի անդամներ: Կոչական: Տրոհվող լրացումներ: Նախադասության հարակից միավորներ:	Դերբայական դարջվածի վերաբերյալ տեղեկության հաղորդում: Նախադասության բազմակի անդամների վերհանում: Կոչականի և տրոհվող անդամների արտահայտության վերհանում: Նախադասության հարակից անդամների վերլուծություն:	1	ՊԳ1, 2, 3, ԼԳ 1

12. 2.ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՔԱՐՏ

	Թեմա	Նպատակ (խնդիր)	Դասաժամերին քննարկման ենթակա հարցեր	Ժամաքանակ	Ստուգման ձև	Գրականություն
1.	Շարահյուսությունը որպես քերականութ. բաժին: Շարահյուսության առարկան: Շարահյուսական կապակցություն: Համադասություն և ստորադասություն: Շարահյուսական կապակցության կապակցման եղանակները: Ուժեղ և թույլ, անմիջական և միջնորդական, միակի և բազմակի կառավարում: Համաձայնություն, առդրություն, հարակցում: Գաղափար արժույթի մասին:	Շարահյուսության ուսումնասիրության առարկայի,խնդիրների, լեզվական մակարդակների վերաբերյալ տեղեկատվություն: Դաս. Կապակցության եղանակների ճանարում և տարբերակում:	Շարահյուսության նվազագույն և առավելագույն միավորներ: Լեզվական մակարդակներ: Շարահյուսական կապակցություն: Շարահյուսական կապակցության միջոցները: Առդրություն: Համաձայնություն: Կառավարում (ուժեղ, թույլ, անմիջական, միջնորդ., միակի, բազմակի): Հարակցում: Արժույթ:	2	Բանավոր հարցում և թեստային ստուգում	ՊԳ 1, 3 ԼԳ 1

2	Բառակապակցություն: Ազատ և կայուն բառակապակցություն: Առդրության եղանակով կապակցվող գոյականական բառակապակցություն:	Տարբեր կարծիքների լուսաբանում:Բառի և բառակապակցության, բառակապակցության և նախադասության նմանությունների և տարբերությունների վերհանում: Չթեքվող լիիմաստ խոսքի մասերի կապակցան հնարավորությունների վերհանում գոյականների հետ	1.Բառակապակցության սահմանում; 2.Բառակապակցությունների դասակարգում: 3.Վերաիմաստավորված կայուն բառակապակցություններ: 4.Շարույթ: 1.Ածականով, թվականով, չհոլովվող դերանուններով, մակբայով, հարակատար և ենթակայական դերբայներով գոյականական բառակապակցություններ: 2.Շարադասություն:	2	Բանավոր հարցում, *թեստային ստուգում*	ՊԳ 1, 2, 3 ԼԳ 1
3	Անմիջական և միջնորդական կառավարման եղանակով կապակցվող գոյականական բառակապակցութ. Ածականական բառակապակցություն: Դերանվանական ,բառակապակցություն թվականական, մակբայական և կապային բառակապակցություն ներ: Առդրության եղանակով կապակցվող բայական բառակապակցություն: Անմիջական և միջնորդական կառավարման եղանակով կապակցվող բայական	Անմիջական և միջնորդական կառավարման եղանակով կապակցվող գոյականական բառակապակցությունների բացահայտում:. Ածականական բառակապակցության(առդրության և կառավարման եղանակներով իրականացվող) ճանաչում: Դերանվանական ,թվականական, մակբայական և կապային բառակապակցությունների վերհանում:(առդրության և կառավարման եղանակներով իրականացվող):	Անմիջական և միջնորդական կառավարման եղանակով կապակցվող գոյականական: բառակապակցություններ Ածականական բառակապակցությունների կաղապարներ: Դերանվանական ,թվականական, մակբայական և կապային բառակապակցություններ: Առդրության եղանակով կապակցվող բայական բառակապակցությունների կաղապարներ: 1.Հոլովաձևերով արտահայտված կառավարում:	2	Բանավոր *ստուգում* Թեստային ստուգում:	ՊԳ 1, 3, 4 ԼԳ 1

	բառակապակցություն:	Առդրության եղանակով կապակցվող բայական բառակապակցությունների կաղապարների վերհանում: Անմիջական և միջնորդական կառավարման եղանակով կապակցվող բայական բառակապակցությունների տաբերակում:	2.Կապական կառույցներով արտահայտված բայական բառակապակցություններ:			
4	Նախադասությունը որպես լեզվական միավորէ Նախադասության գլխավոր և երկրորդական անդամներէ Պարզ նախադասության գլխավոր անդամներ՝ ենթակա և© ստորոգյալէ Ենթակայի և ստորոգյալի կապակցությունը: Միակազմ նախադասությունները և տեսակները	Նախադասության տեսակներն ըստ հնչերանգի, դրական և ժխտական, միակազմ և երկկազմ նախադասությունների վերաբերյալ տեղեկության հաղորդում: Նախադասության գլխավոր և երկրորդական անդամների վերլուծության բացահայտում: Ենթակայի և ստորոգյալի արտահայտության և կազմության լուսաբանում: Դիմավոր միակազմ և անդեմ միակազմ նախադասությունների ենթատեսակների բացահայտում և ճանաչում:	1.Շարահյուսական մակարդակի կարգեր՝ համաձայնություն, կառավարում, առդրություն, համադասություն և ստորադասություն: 2.Պարզ նախադասության կառուցվածքը: 1.Ենթակայի արտահայտությունը: Պարզ և բաղադրյալ 3.Պարզ ենթականեր: ստորոգյալ: 4.Բաղադրյալ ստորոգյալ: Դիմավոր միակազմ և անդեմ միակազմ նախադասությունների ենթատեսակները:	1	Բանավոր հարցում: Թեստային ստուգում: Թիմային աշխատանք:	ՊԳ 1,3 ԼԳ1

5	Նախադասության երկրորդական անդամներ. նրանց դասակարգման սկզբունքները£ Գոյականական անդամի լրացումներ՝ որոշիչ: Որոշչի և որոշյալի, հատկացուցչի և հատկացյալի, բացահայտչի և բացահայտյալի կապակցությունը£ Բայական անդամի լրացումներ:Խնդիրներ: Բայական անդամի պարագա լրացումներ: Դերբայական դարձված: Նախադասության բազմակի անդամներ: Կոչական: Նախադասության հարակից միավորներ:	Նախադասության երկրորդական անդամներիդասակարգման սկզբունքների բացահայտում:Գոյականական անդամի լրացումների ճանաչում: Խնդիրների տեսակների ճանաչու մ,դրանց արտահայտությունների վերհանում: Պարագաների տեսակնեի և նրանց արըահայտությունների լուսաբանում: Դերբայական դարջվածի վերաբերյալ տեղեկության հաղորդում: Նախադասության բազմակի անդամների վերհանում: Կոչականի,նախադասության հարակից միավորների լուսաբանում:	1.Որոշիչ:Որոշչի և ոչոշյալի կապակցությունը: 2.Հատկացուցիչ:Հատկացուցչի և հատկացյալի կապակցությունը: 3.Բացահայտիչ:Բացահայտչի և բացահայտյալի կապակցությունը: 1.Սեռի և բնության խնդիրներ: Բուն պարագաներ և պարագայական խնդիրներ: Կողմնակի անդամներ:Տրոհվող դերբայական դարջվածներ: 1.Բազմակի ենթականեր: 2.Գոյականական և բայական անդամի բազմակի լրացումներ: 1.Կոչականի քերականակն կարգեր: 2.Կոչականի շարահյուսական կառուցվածքը: 3.Կոչականի հնչերանգը, շարադասությունըև կետադրությունը: 4.Կոչականի ոճական արժեքը: 5.Վերաբերականներ, միջանկյալ բառեր, ջայնարկություններ, ներդրյալ բառեր, բառակապակցություններ, նախադասություններ:	1	Թեստային ստուգում և բանավոր հարցում, թիմային աշխատանք:	ՊԳ 1,3 ԼԳ1

14. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում.

Ռեսուրսի անվանումը	Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում)
Լսարան (հատուկ կահավորմամբ)	Համակարգիչ, Էկրան, գրատախտակ
Համակարգչային ծրագրեր	MicrSooft Word

14. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Դասընթացն ավարտվում է գրավոր քննությամբ և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով: Գրավոր քննության հարցաթերթիկը կազմվում է տեսական հարցերից, ինչպես նաև գործնական վարժություններից:

Յուրաքանչյուր տարբերակ բաղադրված է 2 տեսական հարցից (ընդհ. 20 միավոր արժեքով) և թեստից (ընդհ. 20 միավոր արժեքով)

Օրինակ՝

1. Նախադասությունների դասակարգումը. միակազմ և երկկազմ նախադասություններ: (10 միավոր)
2. Նախադասություն. հիմնական հատկանիշները: (10 միավոր)
3. Թեստ: (20 միավոր)

ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

Ամփոփիչ քննության հարցաշար

1. Շարահյուսություն առարկան: Շարահյուսական կապակցության միջոցներն ու եղանակները:
2. Բառակապակցությունը որպես լեզվական միավոր:
3. Բառակապակցությունների դասակարգումը:
4. Նախադասության անդամների կապակցությունը:
5. Համաձայնություն:
6. Առդրություն:
7. Խնդրառություն:
8. Լեզու և խոսք:
9. Նախադասությունը և նրա բնորոշ առանձնահատկությունները, ստորոգում, հնչերանգային ավարտվածություն, քերականական ձևավորվածություն, եղանակավորվածություն:
10. Նախադասության տեսակներն ըստ երանգի:
11. Հաստատական և ժխտական նախադասություն:
12. Միակազմ նախադասություն:
13. Դիմավոր միակազմ նախադասություններ:
14. Անդեմ միակազմ նախադասություններ (անվանական, բայական):
15. Թերի նախադասություն:

16. Երկկազմ նախադասություն (համառոտ և ընդարձակ):
17. Նախադասության գլխավոր անդամներ:
18. Ենթակա, նրա տեսակները և արտահայությունը:
19. Ստորոգում, ստորոգյալ:
20. Ստորոգյալի տեսակները:
21. Պարզ ստորոգյալ:
22. Բայական բաղադրյալ ստորոգյալ:
23. Անվանաբայական ստորոգյալ:
24. Ենթակայի և ստորոգյալի համաձայնությունը:

Երկրորդ ընթացիկ քննություն

25. Որոշիչ, նրա արտահայությունը, իմաստները տեսակները, որոշիչ-որոշյալ կապակցությունը:
26. Հատկացուցիչ, նրա արտահայտությունը, իմաստային տեսակները, հատկացուցիչ-հատկացյալի կապակցությունը:
27. Բացահայտիչ, նրա տեսակները, արտահայտության միջոցները, կետադրությունը, բացահայտիչ-բացահայտյալի կապակցությունը:
28. Սեռի և բնույթի խնդիրներ:
29. Նախադասության ներգործական և կրավորական կառուցվածքները, նրանց փոխակերպումը:
30. Անուղղակի խնդիրներ, տրական հոլովով դրվող անուղղակի խնդիրներ:
31. Գործիական հոլովով դրվող անուղղակի խնդիրներ:
32. Բացառական հոլովով դրվող անուղղակի խնդիրներ:
33. Կապով և կապվող բառով արտահայտված անուղղակի խնդիրներ:
34. Պարագաներ, տեղի պարագա, նրա իմաստային տեսակներն ու արտահայտությունը:
35. Ժամանակի պարագա, նրա իմաստային տեսակներն ու արտահայտությունը:
36. Ձևի պարագա, նրա արտահայտությունը:
37. Չափի պարագա, նրա արտահայտությունը:
38. Հիմունքի պարագա:
39. Նպատակի, զիջման պարագաները, նրանց արտահայտությունը:

40. Պատճառի, պայմանի, միասնության պարագաները և նրանց արտահայտությունը:
41. Դերբայական դարձված, նրա շարահյուսական արժեքը:
42. Տրոհվող դերբայական դարձվածներ, նրանց կետադրությունը:
43. Նախադասության բազմակի անդամներ:
44. Տրոհվող լրացումներ:
45. Նախադասության անդամների շարադասությունը:
46. Կոչական:
47. Նախադասության անդամ չհանդիսացող շարահյուսական միավորներ:
48. Նախադասությունն ըստ հնչերանգի:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐԻՉ

Մասնագիտություն՝ 011301.00. 6 Ընդհանուր մանկավարժություն

/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ 011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա

/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ մանկավարժության բակալավր

/բակալավր, մագիստրատուրա/

Վանաձոր 2024

Հեռակա ուսուցման համակարգ

Դասընթացի թվանիշը, անվանումը	**ՀԼԳ/բ-051 «Հայոց լեզու /Շարահյուսություն 1/»**			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	4 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	3-րդ տարի, 2-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային		Դասախոսություն	6
			Գործնական	8
	Ինքնուրույն	106		
	Ընդամենը	120		
Ստուգման ձևը	Գրավոր քննություն			
Դասընթացի նպատակը	Դասընթացի նպատակն է շարահյուսական հիմնարար գիտելիքների մատուցումը, ինչպես նաև ապագա ուսուցչին և՛ տեսական, և՛ գործնական-կիրառական կարողություններով և հմտություններով զինելը:			
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. **Իմանա՝** Բառակապակցության և պարզ նախադասության բաղադրիչների շարահյուսական հարաբերությունների դրսևորման եղանակներն ու միջոցները, դրանց կառուցվածքային հատկանիշները, դասակարգման սկզբունքները: **Կարողանա՝** Տարբերակել բառակապակցությունների և պարզ նախադասութրունների կառուցվածքային տիպերը, տեսակները, գերադաս և ստորադաս բաղադրիչների բնույթը: **Տիրապետի՝** Բառակապակցությունների և նախադասությունների դասակարգմանը, պարզ նախադասության անդամների կապակցման միջոցներին, կաղապաչային ձևերով և գծագրերով բառակապակցություններ նախադասություններ կառուցելու հմտությանը, շարահյուսական վերլուծության հմտություններին:			

Դասընթացի բովանդակությունը	*Թեմա 1* Շարահյուսությունը որպես քերականության բաժին, շարահյուսության կաղապարները: Լեզու և խոսք: *Թեմա 2* Շարահյուսական կապակցության միջոցներն ու եղանակները: *Թեմա 3* Բառակապակցություններ: *Թեմա 4* Նախադասություն, հիմնական հատկանիշները: Տեսակներն ըստ հնչերանգի: *Թեմա 5* Նախադասության կառուցվածքային տեսակները: *Թեմա 6* Ենթակա, տեսակները, արտահայտությունը: *Թեմա 7* Ստորոգյալ, քերականական ձևավորումը, տեսակները, արտահայտությունը: *Թեմա 8* Գոյականական անդամի լրացումներ: *Թեմա 9* Բայական անդամի խնդիր լրացումներ: *Թեմա 10* Բայական անդամի պարագա լրացումներ: *Թեմա 11* Դերբայական դարձված և նախադասության կողմնակի անդամներ: *Թեմա 12* Տրոհվող լրացումներ: *Թեմա 13* Նախադասության հարակից միավորներ:
Գնահատման մեթոդները և չափանիշները	1. Տեսական գիտելիքները՝ գործնական պարապմունքների և խմբային քննարկումների ժամանակ դրսևորած ակտիվությամբ: 2. Գործնական աշխատանքը՝ չորս հարցում՝ 10-ական միավոր գնահատմամբ: 3. Ինքնուրույն աշխատանքները՝ երկու հարցում՝ 10-ական միավոր գնահատմամբ:

Գրականություն	**Պարտադիր գրականություն** Ս. Աբրահամյան, Հայոց լեզու. շարահյուսություն Ս. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, Հայոց լեզու Ս. Աբրահամյան, Ն. Պառնասյան և այլք, Ժամանակակից հայոց լեզու Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն **Լրացուցիչ գրականություն** Ա. Պապոյան, Ժամանակակից հայոց լեզվի գործնական աշխատանքների ձեռնարկ Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան **Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ)** http://www.armin.am/images/menus/2592/Leonid_Telyan.pdf http://lraber.asj-oa.am/6316/1/200-205.pdf